**ԱՎՏՈՊԱՀԵՍՏԱՄԱՍԵՐԻ ՄԱՏԱԿԱՐԱՐՄԱՆ**
**ՊԱՅՄԱՆԱԳԻՐ**
**N ԳՇԲՕԿ-ԳՀ ԱՊՁԲ-19/5-1**

ք.Գյումրի «27» մայիսի 2019 թ.

«Գյումրու շտապ բուժական օգնության կայան» ՓԲԸ-ն ի դեմս Ռոբերտ Թորոսյան-ի, որը գործում է «Գյումրու շտապ բուժական օգնության կայան» ՓԲԸ-ի կանոնադրության հիման վրա, այսուհետ «Գնորդ», մի կողմից, և Ա/Ձ Սարուխան Մուշեղի Բրուտյան--ի, որը գործում է պետական գրանցման վկայականի հիման վրա, այսուհետ «Վաճառող» մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

## 1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1. Վաճառողը պարտավորվում է սույն պայմանագրով (այսուհետ՝ պայմանագիր) սահմանված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով Գնորդին մատակարարել պայմանագրի N 1 հավելվածով՝ Տեխնիկական բնութագիր-գնման-ժամանակացույցով նախատեսված ապրանքը (այսուհետ՝ ապրանք), իսկ Գնորդը պարտավորվում է ընդունել ապրանքը և վճարել դրա համար:

## 2. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

**Գնորդն իրավունքունի՝**

Ապրանքը պայմանագրով սահմանված ժամկետում Վաճառողի կողմից չմատակարարելու դեպքում հրաժարվել ապրանքից, եթե մատակարարման ժամկետները խախտվել են 3 օրից ավելի:

Եթե հանձնվել է անպատշաճ որակի՝ պայմանագրով նախատեսված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող ապրանք՝

ա) պահանջել հատուցելու ապրանքի անպատշաճ որակի լինելու պատճառով իր կատարած ծախսերը.

բ) չընդունել ապրանքն՝ իր հայեցողությամբ սահմանելով անպատշաճ որակի ապրանքը պայմանագրին համապատասխանող որակի ապրանքով անհատույց փոխարինման ողջամիտ ժամկետ և պահանջել Վաճառողից վճարելու պայմանագրի 6.3 կետով նախատեսված տուգանքը.

գ) հրաժարվել պայմանագիրը կատարելուց և պահանջել վերադարձնելու ապրանքի համար վճարված գումարը:

Եթե հանձնվել է պայմանագրով որոշվածից պակաս քանակի ապրանք, ապա՝ ա) պահանջել լրացնելու ապրանքի պակաս հանձնված քանակը,

բ) հրաժարվել հանձնված ապրանքից և դրա համար վճարելուց, իսկ եթե ապրանքի համար վճարվել է, ապա պահանջել վերադարձնելու վճարված գումարը և վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը:

Եթե հանձնվել է տեսակի պայմանի խախտմամբ ապրանք, իր ընտրությամբ՝

ա) ընդունել տեսակի վերաբերյալ պայմանին համապատասխանող ապրանքը և հրաժարվել մնացած ապրանքներից.

բ) հրաժարվել հանձնված բոլոր ապրանքներից և պահանջել վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը.

գ) պահանջել տեսակի վերաբերյալ պայմանին չհամապատասխանող ապրանքի անհատույց փոխարինում պայմանագրով նախատեսված տեսակին համապատասխան ապրանքով:

Վաճառողի կողմից մատակարարման ժամկետների խախտման դեպքում իր հայեցողությամբ սահմանել ապրանքի մատակարարման նոր ժամկետ և պահանջել Վաճառողից վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսվածտույժը:

Վաճառողից պահանջել հատուցելու վնասները, եթե Գնորդը Վաճառողի կողմից պարտավորությունը խախտելու հետևանքով պայմանագրի լուծումից հետո ողջամիտ ժամկետում այլ անձից ավելի բարձր, սակայն ողջամիտ գնով գնել է ապրանք՝ պայմանագրով նախատեսվածի փոխարեն՝ պայմանագրով սահմանված և դրա փոխարեն կնքված գործարքի գների միջև

տարբերության չափով, ինչպես նաև ապրանքն այլ անձից ձեռք բերելու համար իր կատարած բոլոր անհրաժեշտ և ողջամիտծախսերը:

Միակողմանի լուծել պայմանագիրը (լրիվ կամ մասնակի), եթե Վաճառողն էականորեն խախտել է պայմանագիրը.

2.1.7.1 Վաճառողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) մատակարարվել է անպատշաճ որակի ապրանք որը չի կարող փոխարինվել Գնորդի համար ընդունելի ժամկետում.

բ) ապրանքի մատակարարման ժամկետները խախտվել են 3 օրից ավելի,

Զննել ապրանքը և հայտնաբերված թերությունների մասին անհապաղ տեղեկացնել Վաճառողին:

**Գնորդը պարտավոր է՝**

Կատարել պայմանագրին համապատասխան մատակարարված ապրանքի ընդունումն ապահովող բոլոր անհրաժեշտգործողությունները:

Վաճառողի հանձնած ապրանքից պայմանագրին համապատասխան հրաժարվելու դեպքում, ապահովել այդ ապրանքի պատասխանատու պահպանությունը և դրա մասին անհապաղ տեղեկացնել Վաճառողին:

Պայմանագրով նախատեսված կարգով և ժամկետներում մատակարարված ապրանքն ընդունելու դեպքում Վաճառողին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները, իսկ վճարման ժամկետի խախտման դեպքում՝ նաև պայմանագրի 6.5 կետով նախատեսված տույժը:

Ապրանքի քանակի, տեսականու, որակի մասին պայմանագրի պայմանները խախտելու մասին Վաճառողին ծանուցել թերությունը հայտնաբերելուց հետո անմիջապես կամ այն բանից հետո՝ ողջամիտ ժամկետում, երբ պայմանագրի համապատասխան պայմանի խախտումը պետք է հայտնաբերված լիներ՝ ելնելով ապրանքի բնույթից և նշանակությունից:

Պայմանագրի 2.3.3 կետի համաձայն պայմանագրի լուծումից հետո Վաճառողին հատուցել վերջինիս պատճառված և սահմանված կարգով հիմնավորված վնասները:

**Վաճառողն իրավունքունի՝**

Գնորդից պահանջել ընդունելու պայմանագրով նախատեսված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով մատակարարված ապրանքը:

Գնորդից պահանջել վճարելու պայմանագրով նախատեսված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով մատակարարված և Գնորդի կողմից ընդունված ապրանքի համար իրեն վճարման ենթակա գումարները:

Միակողմանի լուծել պայմանագիրը (լրիվ կամ մասնակի), եթե Գնորդն էականորեն խախտել է պայմանագիրը:

2.3.3.1 Գնորդի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե բազմիցս խախտվել են ապրանքի համար վճարելու ժամկետները:

2.3.4 Գնորդի համաձայնությամբ վաղաժամկետ մատակարարել ապրանքը:

**Վաճառողը պարտավոր է՝**

Գնորդին հանձնել ապրանքը՝ պայմանագրով նախատեսված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով:

Ապահովել ապրանքի մատակարարումը պայմանագրի 2.1.2 կետի բ) ենթակետին և (կամ) 2.1.5 կետին համապատասխան՝ Գնորդի կողմից սահմանված ժամկետներում:

2.4.3 Գնորդին հանձնել երրորդ անձանց իրավունքներից ազատ ապրանք:

Գնորդին հանձնել պայմանագրով նախատեսված որակի և քանակի ապրանք՝ պայմանագրով նախատեսված ժամկետներում և հասցեով, իսկ Գնորդի պահանջով տրամադրել ապրանքի որակը հավաստող՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված փաստաթղթեր:

Թերի մատակարարում թույլ տալու դեպքում, պայմանագրով նախատեսված կարգով, լրացնել թերի մատակարարվածը:

Հետ տանել Գնորդի կողմից պայմանագրի 2.2.2 կետին համապատասխան՝ պատասխանատու պահպանության ընդունված ապրանքը կամ ողջամիտ ժամկետում տնօրինել այն, ինչպես նաև հատուցել ապրանքը պատասխանատու պահպանության ընդունելու, այն հրացնելու կամ Վաճառողին վերադարձնելու հետ կապված անհրաժեշտ ծախսերը:

Գնորդին հանձնել ապրանքի պատկանելիքները և համապատասխան փաստաթղթերը:

Պայմանագրի 2.1.7 կետի համաձայն պայմանագրի լուծումից հետո Գնորդին հատուցել վերջինիս պատճառված և սահմանված կարգով հիմնավորված վնասները:

Պայմանագրի կատարման ապահովման գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթացսկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Գնորդին:

### 3. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳԻՆԸ ԵՎ ՎՃԱՐՄԱՆ ԿԱՐԳԸ

Պայմանագրի գինը կազմում է 942 000 (ինը հարյուր քառասուներկու հազար) ՀՀ դրամ, ներառյալ ԱԱՀ-ն[1]: Պայմանագրի գինը ներառում է պայմանագրի կատարումն ապահովելու նպատակով Վաճառողի կողմից` կատարվելիք բոլոր վճարները (ծախսերը), այդ թվում` հարկերը, տուրքերը, փոխադրման, ապահովագրմանծախսերը,պարգևավճարներըևակնկալվողշահույթը:

Ապրանքի մատակարարման գինը կայուն է և Վաճառողն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Գնորդը նվազեցնելու այդ գինը:

Գնորդն իրեն մատակարարված ապրանքի դիմաց վճարում է ՀՀ դրամով անկանխիկ` դրամական միջոցները Վաճառողի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձման-ընդունման արձանագրության հիման վրա` պայմանագրի 8.15 կետում նշված համաձայնագրին կից վճարման ժամանակացույցով (հավելված N 2) նախատեսված չափերով և`ամիսներին: Եթե արձանագրությունը կազմվում է տվյալ ամսվա 20-ից հետո և այդ ամսում վճարման ժամանակացույցով նախատեսված են ֆինանսական միջոցներ, ապա վճարումն իրականացվում է մինչև 30 աշխատանքային օրվա ընթացքում,բայցոչուշ,քանմինչևտվյալ տարվա դեկտեմբերի 20-ը:

### 4. ԱՊՐԱՆՔԻ ՈՐԱԿԸ ԵՎ ԵՐԱՇԽԻՔԸ

4.1 Վաճառողը երաշխավորում է մատակարարված պյաբանքի որակի համապատասխանությունը պետական ստանդարտի պահանջներին:

### 5. ԱՊՐԱՆՔԻ ՀԱՆՁՆՈՒՄԸ ԵՎ ԸՆԴՈՒՆՈՒՄԸ

Մատակարարված ապրանքն ընդունվում է Գնորդի և Վաճառողի միջև հանձնման- ընդունման արձանագրության ստորագրմամբ: Ապրանքը Գնորդին հանձնելու փաստը ֆիքսվում է Գնորդի և Վաճառողի միջև երկկողմ հաստատված փաստաթղթով` նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

Մինչև պայմանագրով ապրանքի մատակարարման համար նախատեսված օրը ներառյալ Վաճառողը Գնորդին է տրամադրում իր կողմից ստորագրված` ապրանքը Գնորդին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը (հավելված N 3.1), իսկ էլեկտրոնային գնումների ARMEPS համակարգի միջոցով (գործողության իրականացման ձեռնարկը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Օրենսդրություն» բաժնի «Ուղեցույցներ, ձեռնարկներ» ենթաբաժնում)` նաև հանձնման-ընդունման արձանագրությունը (հավելված N 3): Ընդ որում Վաճառողը հանձնման- ընդունման արձանագրությունը չի կնքում, հաստատում է էլեկտրոնային ստորագրությամբ` լրացնելով միայն այն սյունակները, որոնք վերաբերում են իր տվյալներին (լրացման կարգը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Օրենսդրություն» բաժնի «Ֆինանսների նախարարի հրամաններ»ենթաբաժնում):

Եթե մատակարարված ապրանքը համապատասխանում է պայմանագրի պայմաններին, Գնորդը պայմանագրի 5.1 կետում նշված փաստաթղթերը ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրվանից հաշված 10 աշխատանքային օրվա ընթացքում ստորագրում և էլեկտրոնային գնումների ARMEPS համակարգի միջոցով Վաճառողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա ստորագրման համար հիմք հանդիսացած դրականեզրակացությունը:

Եթե մատակարարված ապրանքը կամ դրա մի մասը չի համապատասխանում պայմանագրի պայմաններին, ապա Գնորդը չի ստորագրում հանձնման-ընդունման արձանագրությունը և պայմանագրի 5.2 կետում նշված ժամկետում էլեկտրոնային գնումների ARMEPS համակարգի միջոցով Վաճառողին հետ է վերադարձնում հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա չստորագրման համար հիմք հանդիսացած բացասական եզրակացությունը: Սույն կետի կիրառման դեպքում Գնորդը ձեռնարկում է նման իրավիճակի համար պայմանագրով նախատեսված

---

միջոցները և Վաճառողի նկատմամբ կիրառում է պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

Եթե պայմանագրի 5.2 կետով սահմանված ժամկետում Գնորդը չի ընդունում մատակարարված ապրանքը կամ չի մերժում դրա ընդունումը, ապա մատակարարված ապրանքը համարվում է ընդունված և պայմանագրի 5.2 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Գնորդը էլեկտրոնային գնումների ARMEPS համակարգի միջոցով Վաճառողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունմանարձանագրությունը:

## 6. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

Վաճառողը պատասխանատվություն է կրում հանձնած ապրանքի որակի և պայմանագրով նախատեսված մատակարարման ժամկետների պահպանման համար:

Վաճառողի կողմից պայմանագրով նախատեսված ապրանքի մատակարարման ժամկետների խախտման դեպքում Վաճառողից յուրաքանչյուր ուշացված օրվա համար գանձվում է տույժ՝ մատակարարման ենթակա,սակայնչմատակարարվածապրանքիգնի0,05(զրոամբողջհինգ հարյուրերրորդական) տոկոսի չափով:

Պայմանագրի 1.1 կետում նշված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող ապրանք մատակարարելու յուրաքանչյուր դեպքում Վաճառողից գանձվում է տուգանք՝ պայմանագրի գնի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով[2]:

Պայմանագրի 6.2 և 6.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը հաշվարկվում և հաշվանցվում են Վաճառողին վճարման ենթակա գումարների հետ:

Գնորդի կողմից պայմանագրի 3.3 կետով նախատեսված ժամկետի խախտման համար Գնորդի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարվածգումարի0,05(զրոամբողջհինգհարյուրերրորդական)տոկոսի չափով:

Պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվություն են կրում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

Տույժերի և (կամ) տուգանքի վճարումը Կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորությունները լրիվ կատարելուց:

## 7. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Պայմանագրով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

## 8. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

Պայմանագիրն ուժի մեջ է մտնում Գնորդի կողմից այն ստորագրելու պահից և գործում է մինչև կողմերի՝ պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

Պայմանագրով նախատեսված կողմերի իրավունքների և պարտականությունների կատարման պայման է հանդիսանում պայմանագիրը ՀՀ ֆինանսների նախարարության կողմից հաշվառված լինելու հանգամանքը:[3]

Պայմանագրից ծագած՝ կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և

---

[2] Տուգանքը հաշվարկվում է պայմանագրի գնի այն մասի նկատմամբ, որի համար տվյալ տարվա ընթացքում հատկացվել են ֆինանսական միջոցներ և

կնիքով հաստատված համաձայնության: Պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ պայմանագիրը կնքելու նատակով կազմակերպված գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Վաճառողը ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Գնորդը իրավունք ունի միակողմանիորեն լուծելու պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Գնորդը չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Վաճառողի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Գնորդի կրած վնասներն այն ծավալով, որի մասով պայմանագիրը լուծվել է:

Պայմանագրի հետ կապված վեճերը ենթակա են քննության Հայաստանի Հանրապետության դատարաններում:

Պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա պայմանագրի անբաժանելի մասը:

Արգելվում է պայմանագրում, իսկ եթե պայմանագրի գինը գործոնային է, ապա նաև այդ պայմանագրին կից հաջորդող յուրաքանչյուր տարիներին կնքված համաձայնագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող ապրանքի ծավալների կամ ձեռք բերվող ապրանքի միավորի գնի կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ պայմանագրի փոփոխման յուրաքանչյուր դեպք սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

Եթե պայմանագիրն իրականացվում է գործակալության պայմանագիր կնքելու միջոցով.

1) Վաճառողը պատասխանատվություն է կրում գործակալի պարտավորությունների չկատարման կամ ոչ պատշաճ կատարման համար.

Ապրանքի մատակարարման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև պայմանագրով այդ ժամկետը լրանալը՝ Վաճառողի առաջարկության առկայության դեպքում, պայմանով, որ Գնորդի մոտ չի վերացել ապրանքի օգտագործման պահանջը: Ընդ որում սույն կետով սահմանված դեպքում ապրանքի մատակարարման ժամկետը կարող է երկարաձգվել մեկ անգամ մինչև 30 օրացուցային օրով, բայց ոչ ավել քան պայմանագրով սահմանված ժամկետն է:

Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Վաճառող կամ Գնորդ) օգուտները (խնայողություններ) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Վաճառողի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Վաճառողը:

Պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ապրանքի մատակարարման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի՝ պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ապրանքի մատակարարման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

Վաճառողի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Գնորդը հրապարակում է www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքի «Պայմանագրեր միակողմանի լուծելու մասին ծանուցումներ» բաժնում՝ նշելով հրապարակման

ամսաթիվը: Վաճառողը, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետով սահմանված հրապարակվելուն հաջորդող օրվանից:

Պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնությունձեռքչբերելուդեպքումվեճերըլուծվումենդատականկարգով:

Պայմանագիրը կազմված է _էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ, յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ: Պայմանագրի N 1, N 2, N 3 և N 3.1 հավելվածները, համարվում են պայմանագրի անբաժանելի մասը:

Պայմանագրի հետ կապված հարաբերությունների նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

Պայմանագրով նախատեսված ծառայությունների մատուցումն իրականացվում է այդ նպատակով ֆինանսական միջոցների առկայության և դրա հիման վրա կողմերի միջև համապատասխան համաձայնագրի կնքման միջոցով: Պայմանագիրը լուծվում է, եթե այն կնքելու օրվան հաջորդող վեց ամսվա ընթացքում այդ նպատակով պայմանագրի կատարման համար ֆինանսական միջոցներ չեն նախատեսվում: Եթե պայմանագրի կատարման համար հատկացված ֆինանսական միջոցների չափը գերազանցում է գնումների բազային միավորի յոթանասունապատիկը, ապա Պատվիրատուի կողմից համաձայնագիր կկնքվի, եթե Կատարողի կողմից տուժանքի ձևով ներկայացված պայմանագրի ապահովումը՝ նախատեսված ֆինանսական միջոցների չափով, փոխարինվում է բանկային երաշխիքով կամ կանխիկ փողով՝ հաշվի առնելով ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի N 526-Ն որոշման N 1 հավելվածի 32-րդ կետի 18-րդ ենթակետի «բ» պարբերության պահանջները: Ընդ որում, Կատարողը համաձայնագիրը կնքում, Պատվիրատուին ներկայացնում է համաձայնագիր կնքելու ծանուցումը ստանալու օրվանից տասնհինգ աշխատանքային օրվա ընթացքում: Հակառակ դեպքում պայմանագիրը Պատվիրատուի կողմից միակողմանիորեն լուծվում է:

| ԳՆՈՐԴ | ՎԱՃԱՌՈՂ |
|---|---|
| «Գյումրու շտապ բուժ օգնության կայան» ՓԲԸ ք.Գյումրի, Մազմանյան<br>Յր հեռ. /0312/<br>52512<br>ՀՎՀՀ 05500411<br>«Հայբիզնեսբանկ»ՓԲ<br>Ը Հ/Հ<br>1150012424410100<br>Տնօրեն Ռ.Թորոսյան<br>-----------------------------<br>/ստորագրությու<br>ն/ Կ.Տ | Ա/ՁՍարուխանՄուշեղիԲրուտյան<br>Ք. Երևան, Նոր-Արեշ 15 փ. 7 շ. 12 բն.<br>«ԱյԴի բանկ» ՓԲԸ<br>Հ/Հ 11816004207301<br>ՀՎՀՀ 23162059<br>-----------------------------<br>/ստորագրությու<br>ն/ Կ.Տ |

ՀավելվածN1
27.05 2019թ. կնքված
ԳՇԲՕԿ-ԳՀԱՊՁԲ-19/5-1 ծածկագրով
պայմանագրի

ՏԵԽՆԻԿԱԿԱՆԲՆՈՒԹԱԳԻՐ-ԳՆՄԱՆԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

ՀՀդրամ

| Ապրանքի | | | | | | | | | | Մատակարարում | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| հրավերով նախատեսված չափաբաժնի համարը | գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV) | անվանումը և ապրանքային նշանը | արտադրողի անվանումը և ծագման երկիրը | | տեխնիկական բնութագիրը | չափման միավորը | միավոր գին/ՀՀ դրամ | ընդհանուր գին/ՀՀ դրամ | ընդհանուր քանակը | Հասցե | քանակ | ժամկետ |
| 4 | 34331300 | Ֆորդ Տրանզիտ ավտոմեքենայի առջևի սալոնի ջեռուցման ռադիատոր | KALE | Թուրքիա | առջևի սալոնի ջեռուցման ռադիատոր Մատակարարվող պահեստամասերը պետք էլինեն եվրոպականկամ համարժեք որակի արտադրության | հատ | 20000 | 60 000 | 3 | ք.Գյումրի Մազմանյան 3բ | 3 | 2-րդ,3-րդև 4-րդ եռամսյակները ում մինչև 15.12.2019թ. |
| 6 | 34331300 | Ֆորդ Տրանզիտ ավտոմեքենայի բենդեքս(կցորդիչի | TAIPER | Թուրքիա | ավտոմեքենայի բենդեքսը Մատակարարվող պահեստամասեր պետք է լինի եվրոպական կամ համարժեք որակի | հատ | 6500 | 19500 | 3 | ք.Գյումրի Մազմանյան 3բ | 3 | 2-րդ,3-րդև 4-րդ եռամսյակները ում մինչև 15.12.2019թ. |

| | | | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | հանդար ձիչ) | | | արտադրության | | | | | | | |
| 16 | 34331300 | Ֆորդ Տրանզիտ ավտոմեքենայի ռեսորի թերթ | STR | Թուրքիա | հետևվի ռեսորի թերթ համար N1 թերթ Մատակարարվող պահեստամասեր պետք է լինի եվրոպական կամ նմանատիպ որակի արտադրության: | հատ | 38000 | 152000 | 4 | ք.Գյումրի Մազմանյան 3բ | 4 | 2-րդ,3-րդև 4-րդ եռամսյակ նե րում մինչև 15.12.2019թ. |
| 23 | 24951310 | Ֆորդ Տրանզիտ ավտոմեքենայի ապակե մաքրիչ մեխանիզմի չսառչող հեղուկ | EFOR | ՌԴ | ապակեմաքրիչ մեխանիզմի չսառչող հեղուկ 30-40C | լիտր | 550 | 22000 | 4<br>0 | ք.Գյումրի Մազմանյան 3բ | 40 | 2-րդ,3-րդև 4-րդ եռամսյակ նե րում մինչև 15.12.2019թ. |

| | | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| 24 | 34331300 | Ֆորդ Տրանզիտ ավտոմեքենայի հողմապակի | FORD | ԱՄՆ | հողմապակի դիմացի Մատակարարվող պահեստամասեր պետք է լինի եվրոպական կամ նմանատիպ որակի արտադրության: | հատ | 25000 | 50000 | 2 | ք.Գյումրի Մազմանյան 3բ | 2 | 2-րդ,3- և 4-ր եռամսյ նե րու մինչ 15.12.20 . |
| 26 | 34331300 | Ֆորդ Տրանզիտ ավտոմեքենայի ABS-ի լարեր (առջևի եվ հետևի) լրակազմ | SKT | Թուրքիա | ABS-ի լարեր (առջևի եվ հետևի) լրակազմ Մատակարարվող պահեստամասեր պետք է լինի եվրոպական կամ նմանատիպ որակի արտադրության: | հատ | 5000 | 20000 | 4 | ք.Գյումրի Մազմանյան 3բ | 4 | 2-րդ,3- և 4-ր եռամսյ նե րու մինչ 15.12.20 . |
| 28 | 34331300 | Ֆորդ Տրանզիտ ավտոմեքենայի էլ մեկնարկիչի վերանորոգման կոմպլեկտ | TAIPER | Թուրքիա | էլ մեկնարկիչի վերանորոգման կոմպլեկտ լրակազմ միանգամից տեղադրվող Մատակարարվող | լրակազմ | 19000 | 57000 | 3 | ք.Գյումրի Մազմանյան 3բ | 3 | 2-րդ,3- և 4-ր եռամսյ նե րու մինչ 15.12.20 . |

| | | | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | | | | պահեստամասեր պետք է լինի եվրոպական կամ նմանատիպ որակի արտադրության: | | | | | | | |
| 29 | 34331300 | Ֆորդ Տրանզիտ ավտոմեքենայի մեկնարկիչի փական | BESTEP | Չինաստան | մեկնարկիչի փական ամբողջական միանգամից լրակազմ տեղադրվող Մատակարարվող պահեստամասեր պետք է լինի եվրոպական կամ նմանատիպ որակի արտադրության: | լրակազմ | 8000 | 16000 | 2 | ք.Գյումրի Մազմանյա և 3բ | 2 | 2-րդ,3-և 4-ր եռամսյ նե րու մինչև 15.12.20 |
| 30 | 34331300 | Ֆորդ Տրանզիտ ավտոմեքենայի մեկնարկիչի փականի վերանորոգման էլ կոմպլեկտ | BESTEP | Չինաստան | մեկնարկիչի փականի վերանորոգման էլ կոմպլեկտ Մատակարարվող պահեստամասեր պետք է լինի եվրոպական կամ նմանատիպ որակի արտադրության: | հատ | 5000 | 15000 | 3 | ք.Գյումրի Մազմանյա և 3բ | 3 | 2-րդ,3-և 4-ր եռամսյ նե րու մինչև 15.12.20 |

| | | | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| 33 | 34331300 | Ֆորդ Տրանզիտ ավտոմեքենայի թափանիվ | . | | թափանիվ Մատակարարվող պահեստամասեր պետք է լինի եվրոպական կամ նմանատիպ որակի արտադրության: | հատ | 98000 | 196000 | 2 | ք.Գյումրի Մազմանյա և 3բ | 2 | 2-րդ,3- և 4-ր եռամսյ նե րու մինչ 15.12.201 . |
| 35 | 34331300 | Ֆորդ Տրանզիտ ավտոմեքենայի կարդանի կախոց | AKUSAN | Թուրքիա | կարդանի կախոց Մատակարարվող պահեստամասեր պետք է լինի եվրոպական կամ նմանատիպ որակի արտադրության | հատ | 6500 | 26000 | 4 | ք.Գյումրի Մազմանյա և 3բ | 4 | 2-րդ,3- և 4-ր եռամսյ նե րու մինչ 15.12.201 . |
| 41 | 34321130 | Ֆորդ Տրանզիտ ավտոմեքենայի արգելակային ռետինյա խողովակներ | BSG | Թուրքիա | արգելակային ռետինյա խողովակ առջևի հատ՝2 հետևի հատ՝2 Մատակարարվող պահեստամասեր պետք է լինի եվրոպական կամ նմանատիպ որակի արտադրության | հատ | 8000 | 32 000 | 4 | ք.Գյումրի Մազմանյա և 3բ | 4 | 2-րդ,3- և 4-ր եռամսյ նե րու մինչ 15.12.201 . |

| | | | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| 60 | 34331300 | Հերմետիկ 150գր | AVTO SIL՛A | ՌԴ | տակդիրների համար | հատ | 700 | 3 500 | 5 | ք.Գյումրի Մազմանյա և 3բ | 5 | 2-[illegible] և 4-ր եռամսյ[illegible] նե րու[illegible] մինչ[illegible] 15.12.20[illegible] . |
| 61 | 31440000 | Էլ.մարտկոց 6CT 75 | OBERON | ՌԴ | 6ST-75 մարտկոց Գնահատված լարումը `12 Վ; Անվանական հզորություն `75 Աh; թողարկի հոսանքը 640 Ա-ից սկսած Մարտկոցի ընդհանուր չափսերը `276x175x190 մմ; Քաշը էլեկտրոլիտով `18.9 կգ:(+,- եվրոստանդարտ) | հատ | 28000 | 168 000 | 6 | ք.Գյումրի Մազմանյա և 3բ | 6 | 2-րդ,3-[illegible] և 4-ր եռամսյ[illegible] նե րու[illegible] մինչ[illegible] 15.12.20[illegible] |

| | | | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| 68 | 34331300 | Ֆորդ Տրանզիտ ավտոմեքենայի բենզապոմպ | BENDE PARTS | Թուրքիա | բենզապոմպ | հատ | 21000 | 105000 | 5 | ք.Գյումրի Մազմանյան 3բ | 5 | 2-րդ,3-րդ և 4-րդ եռամսյակներ մինչև 15.12.201 |

բոլոր պահեստամասերը նախատեսված են

Ֆորդ Տրանզիտ մակնիշի 2011 թվականի արտադրության ավտոմեքենային համար բենզինային շարժիչ՝-2.3լ

Շարժիչի հզորություն-՝88.3/120ԿՎՏ/Ձ.ու բեռնվածության առավելագույն զանգվածը՝3500կգ

Զանգվածը առանց բեռնվածության՝2200կգ

ԳՆՈՐԴ
«Գյումրու շտապ բուժ օգնության կայան» ՓԲԸ
ք.Գյումրի, Մազմանյան 3բ
հեռ. /0312/ 52512
ՀՎՀՀ 05500411
«Հայբիզնեսբանկ»ՓԲԸ
Հ/Հ 1150012424410100
Տնօրեն՝ Ռ.Թորոսյան

/ստորագրություն/
Կ.Տ

ՎԱՃԱՌՈՂ
Ա/ՁՍարուխանՄուշեղիԲրուտյան
Ք. Երևան, Նոր-Արեշ 15 փ. 7 շ. 12 բն.
«ԱյԴի բանկ» ՓԲԸ
Հ/Հ 11816004207301
ՀՎՀՀ 23162059

/ստորագրություն/
Կ.Տ

ՀավելվածN2
27.05.2019թ. կնքված
ԳՇԲՕԿ-ԳՀԱՊՁԲ-19/5-1 ծածկագրով պայմանագրի

ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

| Ապրանքի | | | | | | | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| հրավերով նախատեսված չափաբաժնի համարը | գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը` ըստ ԳՄԱ դասակարգման (CPV) | անվանում | դիմաց վճարումները նախատեսվում է իրականացնել 2019 թ-ին` ըստ ամիսների, այդ թվում** | | | | | | | | | | | | | |
| | | | հունվար | փետրվար | մարտ | ապրիլ | մայիս | հունիս | հուլիս | օգոստոս | սեպտեմբեր | հոկտեմբեր | նոյեմբեր | դեկտեմբեր | Ընդամենը | |
| 4 | 34331300 | Ֆորդ Տրանզիտ ավտոմեքենայի առջևի սայլակի ջլռուցման | | | | | 18000 | 24000 | 30000 | 36000 | 42000 | 48000 | 54000 | 60000 | 60000 | |

| | | | | | | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | որ | | | | | | | | | | | | | |
| 6 | 34331300 | Ֆորդ Տրանզիտ ավտոմեքենայի բենդեքս(կցորդիչի հանդարձիչ) | | | | | 5850 | 7800 | 9750 | 11700 | 13650 | 15600 | 17550 | 19500 | 19500 |
| 16 | 34331300 | Ֆորդ Տրանզիտ ավտոմեքենայի ռեսորի թերթ | | | | | 45600 | 60800 | 76000 | 91200 | 106400 | 121600 | 136800 | 152000 | 152000 |
| 23 | 24951310 | Ֆորդ Տրանզիտ ավտոմեքենայի ապակեմաքրիչ մեխանիզմի չսառչող հեղուկ | | | | | 6600 | 8800 | 11000 | 13200 | 15400 | 17600 | 19800 | 22000 | 22000 |
| 24 | 34331300 | Ֆորդ Տրանզիտ ավտոմ | | | | | 15000 | 20000 | 25000 | 30000 | 35000 | 40000 | 45000 | 50000 | 50000 |

| | | | | | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | երենա յի հողմ ապա կի | | | | | | | | | | | | | |
| 26 | 34331300 | Ֆորդ Տրանզ իտ ավտոմ երենայ ի ABS-ի լարեր (առջե վի եվ հետեվի) լրակազմ | | | | | 6000 | 8000 | 10000 | 12000 | 14000 | 16000 | 18000 | 20000 | 20000 |
| 28 | 34331300 | Ֆորդ Տրանզի տ ավտոմեք ենայի էլ | | | | | 17100 | 22800 | 28500 | 34200 | 39900 | 45600 | 51300 | 57000 | 57000 |

| | | | | | | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | մեկնարկիչի վերանորոգման կոմպլեկտ | | | | | | | | | | | | | |
| 29 | 34331300 | Ֆորդ Տրանզիտ ավտոմեքենայի մեկնարկիչի փական | | | | | 4800 | 6400 | 8000 | 9600 | 11200 | 12800 | 14400 | 16000 | 16000 |
| 30 | 34331300 | Ֆորդ Տրանզիտ ավտոմեքենայի մեկնարկիչի փականի վերանորոգման էլ կոմպլեկտ | | | | | 4500 | 6000 | 7500 | 9000 | 10500 | 12000 | 13500 | 15000 | 15000 |
| 33 | 34331300 | Ֆորդ Տրանզիտ ավտոմեքենայի թափանիվ | | | | | 58800 | 78400 | 98000 | 117600 | 137200 | 156800 | 176400 | 196000 | 196000 |
| 35 | 34331300 | Ֆորդ Տրանզիտ ավտոմեքենայի կարդանի կախոց | | | | | 7800 | 10400 | 13000 | 15600 | 18200 | 20800 | 23400 | 26000 | 26000 |
| 41 | 34321130 | Ֆորդ Տրանզիտ ավտոմեքենայի | | | | | | | | | | | | | |

| | | | | | | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | արգելակային ռետինյա խողովակներ | | | | | 9600 | 12800 | 16000 | 19200 | 22400 | 25600 | 28800 | 32000 | [illegible] |
| 60 | 34331300 | Հերմետիկ 150գր | | | | | 1050 | 1400 | 1750 | 2100 | 2450 | 2800 | 3150 | 3500 | 3500 |
| 61 | 31440000 | Էլ.մարտկոց 6CT 75 | | | | | 50400 | 67200 | 84000 | 100800 | 117600 | 134400 | 151200 | 168000 | 168000 |
| 68 | 34331300 | Ֆորդ Տրանզիտ ավտոմեքենայի բենզապոմպ | | | | | 31500 | 42000 | 52500 | 63000 | 73500 | 84000 | 94500 | 105000 | 105000 |

* Վճարման ենթակա գումարները ներկայացվում են աճողական կարգով: Սույն ժամանակացույցը լրացվում և կնքվում է ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում կողմերի միջև կնքվող համաձայնագրի հետ միաժամանակ՝ որպես դրա անբաժանելի

ԳՆՈՐԴ
«Գյումրու շտապ բուժ օգնության կայան» ՓԲԸ
ք.Գյումրի, Մազմանյան 3բ
հեռ. /0312/ 52512
ՀՎՀՀ 05500411
«Հայբիզնեսբանկ»ՓԲԸ
Հ/Հ 1150012424410100
Տնօրեն Ռ.Թորոսյան
------------------------------
/ստորագրություն/
Կ.Տ

ՎԱՃԱՌՈՂ
Ա/ՁՍարուխանՄուշեղիԲրուտյան
Ք. Երևան, Նոր-Արեշ 15 փ. 7 շ. 12 բն.
«ԱյԴի բանկ» ՓԲԸ
Հ/Հ 11816004207301
ՀՎՀՀ 23162059
------------------------------
/ստորագրություն/
Կ.Տ